ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 28-Լ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերի, ՀՀ վարչապետի 11.06.2018թ. «ՀՀ ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշման 20-րդ կետի 5-րդ, 7-րդ, 8-րդ կետերի և 25-րդ կետի 1-ին ենթակետի.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մինչև ՀՀ ոստիկանության պետի իրավասու տեղակալի նշանակումը ՀՀ ոստիկանության պետի 2020 թվականի փետրվարի 1-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործունեության բնագավառների, գործառույթների և դրանք ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների, ոստիկանության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների գործունեության համակարգումը ՀՀ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարի և նրա տեղակալների միջև բաշխելու, ինչպես նաև ՀՀ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 03.12.2019թ. թիվ 25-Լ և թիվ 26-Լ հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 5-Լ հրամանի հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված բնագավառներում իրականացվող աշխատանքների համակարգումը հանձնարարել ՀՀ ոստիկանության պետի խորհրդական Ա.Կիրակոսյանին:

2. ՀՀ ոստիկանության պետի խորհրդական Ա.Կիրակոսյանին՝ վերահսկել սույն հրամանի 1-ին կետում նշված բնագավառների համակարգման աշխատանքների շրջանակներում ՀՀ ոստիկանության պետի կողմից տրված հանձնարարությունների կատարումը:

3. Հրամանը հայտարարել ՀՀ ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին:

ԳՆԴԱՊԵՏ **Վ.ՂԱԶԱՐՅԱՆ**

«06» օգոստոսի 2020թ.

քաղ. Երևան